

Պրոֆ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

## ԶԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Աստղաբաշխական բովանդակութիւն ունեցող ձեռագրերում մենք հաճախ հանդիպում ենք այնպիսի հատվածներին, որոնք նվիրված են արեգակի տեսանելի շարժմանը և դրանից առաջացող տարվա շրջափոխներին: Հեղինակները տալիս են տարվա եղանակների վերաբերյալ լրիվ տեղեկութիւններ: Երբ է սկսվում տարվա այս կամ այն եղանակը, երբ է վերջանում, քանի օր է տևում և այլն: Միաժամանակ նրանք մանրամասն կերպով կանգ են առնում նաև ցերեկվա և գիշերվա տեվողութիւն փոփոխման վրա և նշում են այդ՝ յուրաքանչյուր ամսվա համար: Սակայն այս հարցը նրանք շոշափում են ոչ միայն Հայաստանի պայմաններին համար: Այդ տեսակետից մենք ունենք երկու շատ հետաքրքրական հատվածներ:

1) Հեղինակներից մեկը «յադագս. Չորս յեղանակաց տարվա» գլխում, դադափար տալով տարբեր աշխարհագրական գոտիների (այրեցեալ, բարեխառն) մասին, բարեխառն գոտուց դեպի հուսիս ընկած երկրների մասին արտահայտվում է Հայսպես՝ «Եւ որ յայս է-եանս<sup>1)</sup> յայն կուսէ ի կողմանս հիւսիսոյ, ի սաստիկ ցրտոյն, և ի սառնամանեացն: անընակ ի մարդկանէ եւ ըշտեմարան և տեղի է ցըրտոյն և սառն օդոց և հողմոց»:

<sup>1)</sup> Է-եանս — այսպեղ պիտի հասկանալ բարեխառն գոտի:

Այս փոքր հատվածից պարզ երևում է, որ հին դարերում ևս աստղաբաշխները ընդունել են, որ բարեխառն գոտուց դեպի հյուսիս ընկած երկրները հանդիսանում են «ցրտոյն և սառն օդոց և հողմոց ըշտեմարան»: Բարեխառն գոտուց հյուսիս ընկած երկրամասերը հանդիսանում են Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը և այն, որ ներկայումս ընդանուր բառով անվանում ենք «Арктика»: Ըստ ժամանակակից տեսութիւնների՝ Արկտիկան իրոք հանդիսանում է ինչպես ընդունված է անվանել «погреб холода» կամ «кладовая погоды»:

2) Էլ ավելի հետաքրքրական է մի այլ քաղվածք, որը մենք տալիս ենք Հովհաննես Երզնկացու աշխատութիւնից:

«Իսկ առ մասին՝ եւթնաբաժին հիւսիսական տիւր և գիշերքն փոփոխին՝ ժամուրք քըսան երբեմն տիւրն՝ այսչափ աճյալ երկարանան իսկ գիշերոյն՝ ժամք մինչ ի չորսըն նուագանան եւ որ ի յայն՝ կոյս աշխարհին՝ հիւսիսական այն անընակ ի մարդկանէ՝ և ցըրտական ի յեղանակ՝ դարնանային և ամառան ամիսըս վեց՝ միշտ ի տեղի՝ անդ տիւ մընան: Զի ի խոյէն՝ մինչ ի կըշիւ ընդ կերպ աշնան արեգականն՝ է բարձրութի հիւսիսական:

Ոչ գոյ տեղի ընդդիմակաց՝ գեր ամբարձման առնել ընդդեմ՝ շուր և ծածկոյթ քստուերական եւ ի յաւուրս աշնանային և ձըմերան միշտ անդ գիշեր՝ ամիսըս վեց



երկարամյան Ձի առ հարաւ ցածանալով՝ տրեղականն ոչ ժամանէ անդ առ նս լուսոյն ծագման»:

(Ձեռագիր № 7046, էջ 313):

Թեև Հովհաննես Երզնկացու այս աշխատությունը՝ Վնորին դարձեալ յաղագս երկնի» վերնագրով՝ տպագրված է եղել 1792 թ. Ն. Նախիջևանում (Մատենադարան, գրադարան, № 331 էջ 36) բայց և այնպես ուշագրությունն չի դարձվել այս կարևոր հատվածի վրա:

Այս հատվածում հեղինակը խոսում է մի շատ հետաքրքիր երևույթի մասին, այն է՝ բարեխառն գոտու հյուսիսային երկրում զարնան և ամռան ամիսներին ցերեկվա տևողությունը կարող է հասնել մինչև քսան ժամի, իսկ գիշերվանը՝ միմիայն չորս ժամի և ընդհակառակն: Բացի դրանից, ավելի դարմանալին այն է, որ հեղինակը ամենահոսովոր հյուսիսի մասին, որը, նրա կարծիքով «անքնակ է ի մարդկան է և ցրտական», և որը, ըստ մեր ժամանակակից հասկացողության հանդիսանում է արկտիկան, որտեղ տարվա ընթացքում լինում է միմիայն մի գիշեր՝ սկսած սեպտեմբերի 22-ից մինչև մարտի 21-ը (աշնանային գիշերահավասարից մինչև գարնանային գիշերահավասարը) և մի ցերեկ՝ սկսած մարտի 21-ից մինչև սեպտեմբերի 22-ը (գարնանային գիշերահավասարից մինչև աշնանայինը) — տալիս է շատ ճշգրիտ պատկեր. «զի եղանակ գարնանային և ամառան ամիսըս վեց միշտ ի տեղի անդ տիւ մնան» և «եւ յաւուրս աշնանային և ձըմնեան, միշտ անդ գիշեր ամիսըս վեց երկարանան»:

Զբաղականալով դրանով՝ հեղինակը տալիս է նաև հարցի աստղաբաշխական հիմնավորումը. «զի ի խոյնն մինչ ի կըշիւ ընդ կերպ աշնան արեգականն՝ է բարձրութի հիւսիսական»:

Հին դարերում արեգակը մարտին մտնում էր Խոյի կենդանակերպը, որը և համարվում էր գարնան սկիզբ, իսկ երբ արեգակը սեպտեմբերին մտնում էր Կշիոի կենդանակերպը, այդ համարվում էր աշնան սկիզբ<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ներկայումս, շնորհիվ պրեցեսիայի երևույթի գարնան սկիզբ համարվում է արդեն, երբ արեգակը գտնվում է Չինների կենդանակերպում:

Պետք է գիտենալ, որ առհասարակ գիշերահավասարի օրերին՝ արեգակը, հատելով երկնային հասարակածի գիծը, երկնային մեկ կիսագնդից անցնում է մյուսը. գարնանային գիշերահավասարի օրը՝ հարավայինից դեպի հյուսիս, իսկ աշնանայինին՝ հյուսիսայինից դեպի հարավ: Այս փոքր բացատրությունը հնարավորություն է տալիս պարզ պատկերացնելու հեղինակի արտահայտությունը: Մտնելով Խոյի համաստեղությունը գարնանային գիշերահավասարի օրը՝ արեգակը հարավային կիսագնդից տեսանելի շարժվումով անցնում է հյուսիսայինը և իրոք նրա «բարձրութի հյուսիսական» է մնում, մինչև որ նա նորից, աշնանային գիշերահավասարի օրը, մտնելով Կշիոի կենդանակերպը, կտրում է երկնային հասարակածը և հյուսիսային կիսագնդից անցնում է հարավայինը: Հեղինակն այդ բանը նկարագրում է այնպես «զի առ հարաւ ցածանալով արեգականն ոչ ժամանէ անդ առ նս լուսոյն ծագման»:

Եվ իրապես, հյուսիսային մերձքնիկային տեղամասերում, աշնանային գիշերահավասարի օրվա արեգակնային մայրամուտից հետո արեւը այդ տեղերում չի դիտվում մինչև գարնային գիշերահավասարի օրը:

Նման ճշգրիտ և պարզ պատկերացում բարեխառն գոտու հյուսիսային երկրների վերաբերյալ XIII-րդ դարի հեղինակ Հովհաննես Երզնկացին կարող էր ունենալ լավ ծանոթ լինելով առեվտրականների հանապարհորդություններին, որոնք հասնում էին մինչև Ուրալյան լեռնաշղթայի երկրամասերը: Բայց և այնպես մեզ համար կարևորն այն է, որ Հովհաննես Երզնկացին կարողացել է ըմբռնել ոչ միայն այդ երկրներում տիրող պայմանները, այլ նաև տվել է տվելի հյուսիս ընկած Արկտիկական և բևեռային երկրամասերում տիրող պայմանների ճշգրիտ և իրական պատկերն ու նրա դիտական բացատրությունը, թեև սրա մասին նա հանապարհորդական նկարագրություններից ոչինչ վերցնել չէր կարող: